Ահա թէ ինչու սովորութեան իրաւունքը գարմանալի պահպանողութեամբ մնացել է տակաւին մեր ժողովրդի մէջ և մի տեսակ սրբազործել է այն բազմաթիւ ծէսերն ու սիմբոլական ձևերն, որոնք տեղի են ունենում հարսանիքների ու նշանադրութեանց ժամանակը։ Առաջին հայեացքից անիմաստ ու աննպատակ ենթադրուող ծիսական կողմերը լուրջ հետազննողի աչքում կարող են համարուել իբրև մնացորդներ պատմական կեանքից, ժողովրդի նախնական կացը ընորոշող յարաբերութիւններից. մի խօսքով՝ հետքեր, որոնց հիման վրայ կարելի է գաղափար կազմել, թէ հնումը որպէս էր տեղի ունենում ամուսնութիւնը։ Յիրաւի՝ ժամանակակից ժողովրդական հարսանիքի ծէսերի ու սովորութիւնների մէջ կըգտնենք մի շարք գործողութիւններ, որոնք սիմբոլական ձևով պատկերացնում են, թէ ինչպէս փեսան բռնի ոյժով իւրացնում էր հարսին։

Առևանգումն հնարաւոր էր 'ի կատար ածել ուրիշների, օտար ոյժերի օգնութեամբ։ Այս դէպքում մեծ դեր էին խաղում ցեղակիցները, ազգականները, որոնք հրոսակախումբ կազմելով, արշաւում էին ամուսնացող երիտասարդի հրամանատարութեամբ հարսնացուի տնեցոց վրայ և փախցնում աղջիկը։ Հայոց հին օրինադրքերում դոքա միշտ յիշատակւում են «հրոս» անունով. «որք հրոսն երթեալ էին օգնականք սուտ փեսային» (Շահապիվանի 7-րդ կանոնը)։ Նախընթաց գլխում առաջ բերած օրինակներից էլ երևում է, որ առևանգող երիտասարդը հանապազ իւր մօտիկ ընկերների օգնութեամբ է փախցնում հարսնացուին։ Աղջիկն էլ ունէր իւր պաշտպանները—իւր ազգակիցներից կամ սերնդակիցներից, որոնք իրենց կողմից դուրս էին գալիս առևանգողների դէմ։

Այժմ մեր ժողովրդի մէջ մնացել է մի սովորութիւն, որ յիշեցնում է այդ նախկին հրոսակային ընկերակցութեան գաղափարը։ Ինչպէս յայտնի է, իւրաքանչիւր նորափեսայ նախքան հարսանիքը, հրաւիրում է մի խումբ